Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 77 - Ա
որոշման

«ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ, ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԻՐԵՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ

1.	Ծրագրի նպատակը	ՍՕՍ Մանկական Գյուղեր Միջազգային կազմակերպության, ինչպես նաև իր անդամ ընկերակցություն հանդիսացող «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի համար ռազմավարական նշանակություն ունի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում տեղահանված բնակչության աջակցությունը: Ուստի կազմակերպությունը իրականացնում է ծրագիր՝ նպատակ ունենալով Տավուշի մարզում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 300 ընտանիքի (որից 70%-ը հանդիսանում են Լեռնային Ղարաբաղից տեղահանված) սոցիալական և տնտեսական հզորացումը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների մասին օրենքներով նախատեսվող արտոնություններից:
3.	Բարեգործը և ֆինանսավորման աղբյուրը	Հերման Գմայների հիմնադրամը Գերմանիայում (հասցե՝ Գերմանիա, Ռիդլերշտրասե 55)
4.	Ծրագրի կատարողը	«ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը (ՀՎՀՀ՝ 03517269, հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Հրաչյա Քոչարի 8, բնակարան 18-19)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	201,179,881 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում բնակվող և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված (որից 70%-ը հանդիսանում են Լեռնային Ղարաբաղից տեղահանված) շուրջ 300 ընտանիք
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի հունվարի 24-ից մինչև 2027 թվականի հոկտեմբերի 31-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) նախատեսվում է մասնակիցների համար կազմակերպել սոցիալ-հոգեբանական և իրավական խնդիրների, առաջին օգնության, հիմնական խնամքի և առողջ ապրելակերպի, ձեռներեցության, գենդերային հավասարության, երեխաների իրավունքների, ծնողավարման վերաբերյալ դասընթացներ, սեմինարներ, խորհրդատվություններ, հանդիպումներ: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 24-ից մինչև 2027 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 11,444,245 դրամի չափով. 2) մասնակիցների առաջնային առողջության պահպանման նպատակով տրամադրվելու է անհրաժեշտ դեղահաբեր, վիտամիններ, օժանդակ բժշկական սարքավորումներ՝ 2025 թվականի հունվարի 24-ից մինչև 2027 թվականի հոկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում ՝ 1,800,000 դրամի չափով. 3) մասնակիցներին ըստ անհրաժեշտության նախատեսվում է տրամադրել իրավաբանական, նյութական աջակցություն՝ այդ թվում սննդի փաթեթների, հիգիենայի պարագաների, հագուստի և այլ անհրաժեշտ ապրանքների ձևով: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 24-ից մինչև 2027 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 5,520,000 դրամի չափով. 4) Նախատեսվում է կազմակերպել մասնագիտական դասընթացներ և մասնակիցների համար ձեռք բերել աշխատանքային գործիքներ, այդ թվում՝ վարսահարդարման, մատնահարդարման, դիմահարդարման, ոտնահարդարման գործիքներ, կարի մեքենաներ, կտորեղեն և կարելու համար նախատեսված այլ գործիքներ, գազօջախներ, համակարգիչներ և այլ պարագաներ: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 24-ից մինչև 2027 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 23,400,000 դրամի չափով. 5) ծրագրի մասնակիցները դասընթացներից հետո կներկայացնեն բիզնես նախագծեր և լավագույնները կստանան դրամաշնորհներ՝ 2025 թվականի հունվարի 24-ից մինչև 2027 թվականի հոկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում՝ 7,200,000 դրամի չափով. 6) մասնակից երեխաների համար կկազմակերպվեն մշակութային միջոցառումներ, այդ թվում՝ թատերական ներկայացումներ, հանդիսություններ, էքսկուրսիաներ, կրթության ապահովման համար կտրամադրվեն անհրաժեշտ պարագաներ (գրենական պիտույքներ, դպրոցական հագուստ և այլն), կանցկացվի դասապատրաստում սպորտի, արհեստի, արվեստի և այլ բնագավառներում,

		երեխաների համար կապահովվի արտադպրոցական կրթություն: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 24-ից մինչև 2027 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 13,030,000 դրամի չափով. 7) ծրագրի մասնագիտական անձնակազմի՝ Կյանքի հմտությունների և զբաղունակության 1 մասնագետի, 6 սոցիալական աշխատողի, 3 հոգեբանի և ծրագրի համակարգողի (մասնակիցների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի) վարձատրություն և ապահովագրություն: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 24-ից մինչև 2027 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 114,048,720 դրամի չափով. 8) ծրագրի իրականացման համար նախատեսված գրասենյակային սարքավորումների (համակարգիչներ, տպիչներ) և 1 հատ էլեկտրական մարդատար ավտոմեքենայի ձեռքբերում: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 24-ից մինչև 2027 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 13,340,000 դրամի չափով. 9) տրանսպորտային ծառայությունների ձեռքբերում (փոխադրումներ և տաքսի ծառայությունների ձեռքբերում բացառապես ծրագրային նպատակներով)՝ 1,260,000 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 24-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում. 10) կազմակերպական ծախսեր՝ գրասենյակային պարագաների, տնտեսական նյութերի, կապի և հեռահաղորդակցության ծախսեր, աշխատակիցներին հոգեբանական աջակցության տրամադրման, աշխատակազմի ծախսեր (ծրագրի ֆինանսական և ադմինիստրատիվ մասնագետի վարձատրություն և ապահովագրություն), ծրագրի փակման/բացման նպատակով կազմակերպվող միջոցառումների համար տարածքի/դահլիճի վարձակալության և հյուրասիրության կազմակերպման, մեքենայի վերանորոգման, ապահովագրության, ծրագրի կիսամյակային գնահատման ծախսեր: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 24-ից մինչև 2027 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 10,136,916 դրամի չափով:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) առաջնային առողջության պահպանման նպատակով անհրաժեշտ դեղահաբերի, վիտամինների, օժանդակ բժշկական սարքավորումների ձեռքբերում՝ 1,800,000 դրամի չափով. 2) ծրագրի մասնակիցների համար իրավաբանական ծառայությունների ձեռքբերում՝ 1,560,000 դրամի չափով. 3) մասնակիցներին նյութական աջակցության տրամադրման նպատակով սննդի փաթեթների, հիգիենայի պարագաների, հագուստի և այլ անհրաժեշտ պարագաների ձեռքբերում՝ 3,960,000 դրամի չափով. 4) մասնակիցների համար աշխատանքային գործիքների՝ վարսահարդարման, մատնահարդարման, դիմահարդարման, ոտնահարդարման գործիքների, կարի մեքենաների, կտորեղենի և կարելու համար նախատեսված այլ գործիքների, գազօջախների, համակարգիչների ձեռքբերում և մասնագիտական դասընթացների կազմակերպում՝ 23,400,000 դրամի չափով. 5) մասնակից երեխաների համար մշակութային միջոցառումների կազմակերպման (թատերական ներկայացումներ, համդիսություններ, էքսկուրսիաներ), արտադպրոցական կրթության ապահովման (դասապատրաստում, սպորտ, արհեստ, արվեստ և այլ) ծառայությունների և գրենական պիտույքների, դպրոցական հագուստի և այլ պարագաների ձեռքբերում՝ 13,030,000 դրամի չափով. 6) ծրագրի իրականացման համար նախատեսված գրասենյակային սարքավորումների (համակարգիչներ, տպիչներ) և 1 հատ էլեկտրական մարդատար ավտոմեքենայի ձեռքբերում՝ 13,340,000 դրամի չափով. 7) գրասենյակային պարագաների, տնտեսական նյութերի, կապի և հեռահաղորդակցության ծառայությունների ձեռքբերում՝ 2,206,000 դրամի չափով. 8) տրանսպորտային ծառայությունների ձեռքբերում՝ 1,260,000 դրամի չափով. 9) ծրագրի փակման/բացման, կիսամյակային գնահատման նպատակով կազմակերպվող միջոցառումների համար տարածքի/դահլիճի վարձակալություն և հյուրասիրության կազմակերպում՝ 690,000 դրամի չափով. 10) իրականացվող դասընթացների, ծրագրային համդիպումների ընթացքում դահլիճի վարձակալության և անհրաժեշտ պարագաների, այդ թվում սննդի ձեռքբերում,աշխատանքային նյութերի և տպագրական ծառայությունների ձեռքբերում՝ 11,444,245 դրամի չափով:

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	1) գրասենյակային պարագաների, տնտեսական նյութերի, կապի և հեռահաղորդակցության ծառայությունների ձեռքբերում՝ 2,206,000 դրամի չափով. 2) ծրագրի փակման/բացման, կիսամյակային գնահատման նպատակով կազմակերպվող միջոցառումների համար տարածքի/դահլիճի վարձակալություն և հյուրասիրության կազմակերպում՝ 690,000 դրամի չափով. 3) աշխատակազմի ծախսեր (ծրագրի ֆինանսական և ադմինիստրատիվ մասնագետի վարձատրություն և ապահովագրություն)՝ 6,324,516 դրամի չափով. 4) հոգեբանական աջակցություն աշխատակիցներին (սուպերվիզիա)՝ 199,200 դրամի չափով. 5) մեքենայի ապահովագրության, վերանորոգման ծախսեր՝ 717,200 դրամի չափով:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ինչպես նաև Տավուշի մարզպետի աշխատակազմի, տեղական ինքնակառավարման մարմինների, Միասնական սոցիալական ծառայության համապատասխան տարածքային կենտրոնների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

14.02.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ